

ՀՅԴ ԳԵՄ-ի նախաձեռնությամբ Թորոնթոյի մէջ տեղի ունեցաւ «110 քլմ.՝ 110 տարի» վազքարշաւը



Կարդալ էջ 4

Համիրթընի մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 110-ամեակի ոգեկոչում



Կարդալ էջ 4

Մոնթրէալի մէջ արժանավայել կերպով նշուեցաւ «ՀՕՄ-ի Օր»ը



Կարդալ էջ 3

Գանատայի Հայոց Թեմը աւարտեց Ազգային Երեսփոխանական ժողովը



Գանատայի Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական ժողովը գումարուեցաւ 2-3 Մայիս 2025-ին, Լաւալի մէջ, հիւրընկալութեամբ Ս. Գէորգ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ: Ժողովին կը մասնակցէին Թեմիս բոլոր եկեղեցիներու Ազգային Երեսփոխաններն ու Հոգաբարձութեանց ներկայացուցիչները:

Մանրամասնութիւնները Կարդալ էջ 3

Հայոց Ցեղասպանութեան 110-րդ ամեակի ոգեկոչում Սենթ Գաթրիմզի մէջ



Կարդալ էջ 4

**MAZDA**
GABRIEL

2025 MAZDA CX-70 PLUG-IN HYBRID

CONTACT KEVORK ASADOURIAN,
GENERAL MANAGER, FOR ALL INQUIRIES.
KEVORK@GABRIEL.CA

ANJOU • PLATEAU • ST-JACQUES • ST-LAURENT



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Մոնթրեալի մէջ արժանավայել կերպով նշուեցաւ «ՀՕՄ-ի Օր»ը

Հովանաւորութեամբ ՀՕՄ–ի Գանատայի Շրջանային վարչութեան, կազմակերպութեամբ ՀՕՄ–ի Մոնթրէալի «Սօսէ» եւ Լաւալի «Շուշի» մասնաճիւղերուն, նախագահութեամբ Ալիս Մարգարեանի, Կիրակի, 4 Մայիս 2025–ին, կ.ե. ժամը 4–ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի «Ահարոնեան» սրահէն ներս տեղի ունեցաւ «ՀՕՄ–ի Օր»ուան տօնակատարութիւն, ներկայութեամբ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Գառնիկ Ա. Քհն. Գոյունեանի, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տիմիթեանի, ՀՅԴ Լաւալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէի ներկայացուցիչ Հրանդ Թաշճեանի, Մոնթրէալի «Միհրան Փափազեան» կոմիտէի անդամ Դալար Լեհիմճեանի, Մոնթրէալի եւ Լաւալի Քաղաքապետական խորհուրդի անդամներ Վանա Նազարեանի, Սեդա Թօփուզեանի եւ Մարի Տերոսի, ՀՕՄ–ի Շրջանային վարչութեան ատենապետ եւ օրուան պատգամաբեր Լուսին Փալանճեանի, եւ անդամներուն՝ Վալերին Կէօքճեանի, Արփի Սանոսեանի, Քրիստին Աֆարեանի եւ Աստղիկ Խաշընցեանի, պատկան մարմիններու, քոյր միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներու, մեծ թիւով ՀՕՄ–ուհիներու եւ ՀՕՄ–ի առաքելութեան հաւատացողներու հոծ բազմութեան։

Զեռնարկը սկիզբ առաւ Գանատայի, Հայաստանի, Արցախի եւ ՀՕՄ–ի օրհներգներով, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգեցին յիշատակը ՀՕՄ–ի Լաւալի «Շուշի» եւ Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղերուն անցնող տարեշրջանին ընթացքին մեղմէ առյաւէտ բաժնուած ընկերուհիներուն։ Օրուան հանդիսավար Կարին Գասապեան հանդէս եկաւ բացման խօսքով, որուն մէջ ըսաւ. «Այս տարի մենք կը տօնենք Հայ Օգնութեան Միութեան հիմնադրութեան 115–ամեակը եւ միաժամանակ կը նշենք Գանատայի մէջ գործունէութեան 35–ամեակը։ 1910–ին, երբ ՀՕՄ–ը հիմնադրուեցաւ, անոր նպատակն էր ծառայել, մասնաւորապէս աջակցիլ, թիկունք կանգնիլ մեր իրաւազրկուած ժողովուրդին, բարելաւելով անոր կենցաղային պայմանները մեր պատմութեան դժուար ժամանակի ընթացքին։ Եւ մինչեւ այսօր, ՀՕՄ–ն ու ՀՕՄ–ականը կը մնան զոհողութեան եւ յանձնառութեան փաստը։ ՀՕՄ–ականը կը ծառայէ սիրով, կը գործէ խղճով եւ կ’աշխատի մեր ժողովուրդի վերելքին ի նպաստ ամէն տեղ եւ բոլոր ժամանակներու ընթացքին։ Թէեւ ժամանակներն ու աշխարհը փոխուած են, սակայն ՀՕՄ–ի առաքելութիւնը մնացած է նոյնը՝ ծառայել առանց ակնկալութեան, զօրակցիլ առանց նախապայմաններու, եւ պայքարիլ առանց դադարի»։ Ապա ան ներկայացուց օրուան նախագահ Ալիս Մարգարեանի կենսագրութիւնը, որմէ ետք փունջ մը աշուղական երգերով հանդէս եկաւ Մանուէլ Աշրգեան։

Լաւալի «Շուշի» եւ Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղերու ատենապետներ՝ Ալին Հատիտեան եւ Սօսի Զնկըրեան, սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուցին զոյգ մասնաճիւղերուն 2024–2025 տարեշրջանի գործունէութեան զեկոյցը, որուն յաջորդեց Երեւանի Պետական Երաժշտանոցի դասախօս Կարէն Մանուչարեանի, Կոմիտասի «Կռունկ»–ին ու Առնօ Պապաճանեանի «Թանկօ»–ին ջութակով կատարողութիւնը։ Անկէ ետք զոյգ մասնաճիւղերու ատենապետներն ու Շրջանային վարչութեան ատենապետը, Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենապետ Սարօ Տէր Պետրոսեանի յանձնեցին Ս. Յակոբ Ազգային վարժարանի տարեկան յատկացումը։

Հանդիսավարը օրուան բանախօսը ներկայացնելէ ետք բեմ հրաւիրեց Շրջանային վարչութեան ատենապետ Լուսին Փալանճեան, որպէսզի փոխանցէ օրուան պատգամը։ Փալանճեան նախ ուրախութեան ու հպարտանքի զգացումները արտայայտելով ըսաւ. «Այսօր որքան կը խայտայ մեր հոգին ի տես մեր սիրելի կազմակերպութեան ծաւալուն գործունէութեան, ազնիւ նպատակներ նուաճած ըլլալու արդար հպարտութեամբ։ Վերոյիշեալ առիթներով կ’արժէ յիշել եւ խոնարհիլ յիշատակին դիմաց այն բոլոր ՀՕՄ–ուհիներուն, որոնք տասնամեակներու ընթացքին եկան ու անցան այս մեծ միութեան հնոցէն, իրենց հետքն ու գրոշմը ձգելով անոր պատմութեան էջերուն մէջ», ապա յիշեց Գանատայի մէջ ՀՕՄ–ի հիմնադրութեան գործընթացը՝ ըսելով. «Հաւանական թիւրիմացութեան առաջըր առնելու համար յիշեցնեմ, որ Գանատայի մէջ 1911 թուականէն սկսեալ մասնաճիւղեր գոյութիւն ունեցած են, որոնք կը գործէին որպէս Հիւսիսային Ամերիկայի ընդհանուր կազմի լիիրաւ մասնիկներ։ Հայութեան թիւի աճին հետ, կարիք զգացուած էր առանձին շրջան դառնալու։ Այս մէկը վարչական բնոյթ ունեցող պարզ ընթացք մըն էր», եւ աւելցուց. «Պահ մը մեր ականարկը դարձնենք Գանատայի ՀՕՄ–ի պատմութեան, պիտի տեսնենք, թէ ինչպէս ՀՕՄ–ը առանձին շրջան դառնալէ ետք բնաւ չտկարացաւ, այլ դարձաւ գանատահայութեան պարծանք բերող կազմակերպութիւն։ Թիւով ընդամէնը 1260 անդամ հաշուող մեր կազմակերպութիւնը իր բեղուն գործունէութեամբ եւ հաւատքով ՀՕՄ–ի մեծ ընտանիքին պատիւ բերող շրջան մը դարձաւ։ Առանձին շրջան դառնալէն անմիջապէս ետք կազմակերպեց Գանատայի մասնաճիւղերը, հիմնեց երեք նոր մասնաճիւղեր, շարունակեց նախկին բոլոր ծրագիրները եւ ստանձնեց ուրոյն պատասխանատուութիւններ, ինչպէս օրինակ մեծաթիւ որբերու խնամակալութիւն, Ստեփանակերտի «Սօսէ» մանկապարտէզի եւ Հազրութի Մեծ Թաղեր գիւղի մանկապարտէզի վերանորոգումն ու մնայուն հոգատարութիւնը»։

Բանախօսը նաեւ յիշելով ՀՕՄ–ի ներդրումը Գանատայի տեղական կարիքներուն պարագային, ինչպէս նաեւ կրթական մարզէն ներս, ըսաւ. «ՀՕՄ–ի Գանատայի մասնաճիւղերը ոգի ի բռին աշխատեցան հասնելու մեր գաղութի տեղական բոլոր կարիքներուն, նոյնիսկ հասնելով Գանատայի ահագանգային կարիքներուն, ինչպիսին էր պարագան Գանատայի անտառային հրդեհներու աղէտի ժամանակ կամ թագաժահրի շրջանին հիւանդանոցներու դիմակներ տրամադրելու պարագային։ Իսկ եթէ Գանատայի տարածքին պահ մը նայինք ՀՕՄ–ի առաքելութեան կրթական մարզէն ներս, հոն եւս կը նկատենք հետեւեալները. կրթական օժախներ հիմնելով, ղեկավարելով կամ նպաստելով մեր զաւակներուն հոգիներուն մէջ դրած ենք ու կը շարունակենք դնել հայրենասիրութիւն, ազգասիրութիւն, սէր հայ գիրի, հայ լեզուի, հայ մշակոյթի, հայոց պատմութեան եւ այն բոլորին հանդէպ, որոնք մեզի համար սրբազան նկատուած արժէքներ են։ ՀՕՄ–ուհիներս օժանդակած ենք եւ պիտի շարունակենք օժանդակել մեր դպրոցներուն, մանկապարտէզներուն, շաքաթօրեաներուն, ճամբարներուն, պատանիներուն եւ համալսարանական ուսմանոցներուն»։

Անահիտ Պալեան հանդէս եկաւ Համաստեղի «Հայու ոգին» ասմունքով, ապա տեղի ունեցաւ զարդասեղներու տուչութիւն։

Զեռամբ զոյգ մասնաճիւղերու ատենապետներուն, 15–ամեայ անգամակ-



ցութեան զարդասեղ ստացան Մոնթրէալէն՝ Սեդա Մանկասարեան Պալիօզեան, Մոնիքա Տէր Մինասեան, Արաքսի Ֆերմանեան, Մարի Գաֆաֆեան եւ Թամար Եաղճեան, բացակայ էին՝ Անի Քէօսէեան եւ Սօսի Գոճանեան։ Նոյնպէս 25–ամեայ անդամակցութեան զարդասեղ ստացան Մոնթրէալէն՝ Սեդա Իսկէնեան, Վարդուհի Կարապետեան, Մարալ Նազարեան եւ Սօսէ Տիմիթեան, բացակայ էին՝ Սիլվիա Գուլումճեան, Արփի Մարկորեան, Սօսի Նոյեմի, Ալիս Մոմճեան Ռավարի, Անահիտ Սարգիսեան եւ Հուրի Սինթիա Թորիկեան, իսկ Լաւալէն՝ Հուրի Անտոնեան եւ Նելլի Պարսեմեան, բացակայ էր Վարդուհի Յովհաննէսեան։

Զեռամբ Գանատայի Շրջանային վարչութեան անդամներ Աստղիկ Խաշընցեանի եւ Վալերին Կէօքճեանի, 35–ամեայ զարդասեղ ստացան Մոնթրէալէն՝ Սիլվա Գարբուզեան, Արտեմիս Մկրտիչեան եւ Հուրի Զաքարեան, բացակայ էին՝ Լենա Արզումանեան, Այտա Տէր Ասատուրեան, Սիրան Տիանա Տիմիթեան, Նորա Գաթարոյեան, Թալին Շահպազեան, Շնորհիկ Զոպոյեան եւ Թամար Գապասաքալեան, իսկ Լաւալէն՝ Մարալ Յովսէփեան, Վերժին փուչիկեան, Մարօ Պէրէճիքեան, Մարինա Պէաքճեան եւ Գոհար Թորիկեան Գարակէօզեան, բացակայ էր Ժոժօ Պետրոսեան։ Բացակայ էին նաեւ Մոնթրէալէն 50–ամեայ զարդասեղ ստացող Ռիթա Շապոյեան եւ Աստղիկ Շամլեան։

Զեռամբ Շրջանային վարչութեան ատենապետին, 60–ամեայ անդամակցութեան Պատուոյ Գանահատագիր ստացաւ Լաւալէն Մարի Մարգէեան Եահնէեան, բացակայ էր Անայիս Սեւակեան Տիմիթեան, իսկ Մոնթրէալէն Անահիտ Տիմիթեանի բացակայութեան պատճառաւ գնահատագիրը յանձնուեցաւ Թոռան՝ Վանէ Տիմիթեանի, բացակայ էր նաեւ Սիրվարդ Շայն։

Բեմ բարձրացան ՀՕՄ–ի զոյգ մասնաճիւղերուն նորագիր անդամները եւ «ՀՕՄ–ի Օր»ուան Միացեալ յանձնախումբի ատենապետ Ազգանոյշ Հատիտեանի կնքամայրութեամբ կատարեցին երգման արարողութիւնը։

Հանդիսավարին շնորհակալական խօսքով եւ Արժ. Տէր Գառնիկ Ա. Քհն. Գոյունեանի «Պահպանիչ»ով աւարտեցաւ ձեռնարկը։

Սոնա Թիթիզեան Կէտիկեան
Լուսանկարները՝ Արմէն Ալեմեանի

Գանատայի Հայոց Թեմը աւարտեց Ազգային Երեսփոխանական ժողովը

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Երեսփոխանական ժողովը գումարուեցաւ 2–3 Մայիս 2025–ին, Լաւալի մէջ, հիւրընկալութեամբ Ս. Գէորգ Հայց. Առաքելական եկեղեցւոյ։ Ժողովին կը մասնակցէին Թեմիս բոլոր եկեղեցիներու Ազգային Երեսփոխաններն ու Հոգաբարձութեանց ներկայացուցիչները։

Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Զարեան ժողովի բացումը աղօթքով կատարելէ ետք, ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին յղած օրհնագիրը։

Ժողովը օրակարգերու ընդմէջէն, յառաջիկայ տարուան գործունէութեան համար որդեգրեց հետեւեալ առաջնահերթութիւնները.–

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառի Կաթողիկոս ընտրութեան եւ օծման 30–ամեակին նուիրուած հանդիսութեանց կազմակերպումը Գանատայի համայնքներէն ներս։ Վեհափառ Հայրապետը Գանատա պիտի այցելէ 16–22 Հոկտեմբեր 2025–ին։

Նկատի ունենալով գանատահայ մատղաշ սերունդի հոգեւոր կարիքները՝ շարունակել քրիստոնէական դաստիարակութեան ծրագիրները, յատկապէս Կիրակնօրեայ Դպրոցներուն տրամադրելով նոր պատրաստուած դասագիրքերը։

Շարունակել երիտասարդութեան համար նկատի առնուած աստուածաբանական ուղղափառ դասընթացները, որոնք մեծ հետաքրքրութիւն գտած են երիտասարդներուն մէջ։

Սարկաւազներու եւ դպիրներու համար կազմակերպել յատուկ դասընթացներ եւ աշխատանոցներ, պատրաստելու զանոնք հայ եկեղեցւոյ առաքելութեան եւ ծառայութեան համար։

Ժողովս յատուկ կերպով անդրադարձաւ Արցախի այսօրուան տագնապին, տիրող ճգնաժամին եւ վերահաստատեց իր զօրակցութիւնը Արցախի հայութեան կարիքներուն։

Ժողովս մեծապէս գնահատեց Tyndale Համալսարանի հետ համագործակցութիւնը եւ հայ եկեղեցւոյ ու աստուածաբանութեան մասին պատրաստուած ծրագիրը։

Ժողովի աւարտին տեղի ունեցաւ լրացուցիչ ընտրութիւններ Կրօնական ժողովի եւ Ազգային Վարչութեան։

ԴԻԻԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Համիլթոնի մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 110-ամեակի ոգեկոչում

Կազմակերպութեամբ Համիլթոնի Ս. Մարիամ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ եւ ՀՅԴ «Վաւառեան» կոմիտէի կողմէն Հայ Դատի յանձնախումբին, Ապրիլ 27-ին տեղի ունեցաւ Ցեղասպանութեան 110-րդ ամեակի ոգեկոչում:

Յիշատակումը սկսաւ առաւօտուն, Ս. Մարիամ եկեղեցւոյ մէջ մասնաւոր յիշատակումով եւ մատաղի օրհնութեամբ: Պատարագի աւարտին ներկաները եւ դադուլի անդամները ուղղունցան Հայ կեդրոն, ուր պատշաճ հիւրասիրութեանէ ետք, ժամը 2:30-ին սկսաւ պաշտօնական յայտագիրը՝ Զահալաութեամբ, մասնակցութեամբ հին եւ նոր սերունդներուն:

Քայլերգներու երգեցողութենէն ետք, օրուան հանդիսավարներ՝ Անահիտ Ասատրեան (անգլերէն) եւ Փաթիլ Սիմոնեան (հայերէն) բացման խօսքով ներկայացուցին օրուան պատգամը:

«Ապրելու Ապրիլ», «Տէր Զօր» եւ «Պիտ պաշտպանեմ» երգերով հանդէս եկան Ռաֆայէլլա, Անտրէա եւ Մարիանա Պետրոսեան քոյրերը:

Երգեցողութեան յաջորդեց

Ճուրիա Աբգարեանի համագործփաստագրական ժապաւէնի ցուցադրումը, որուն յաջորդեց ՀՕՄ-ի միօրեայ վարժարանի աշակերտներուն, ՀՄԸՄ-ի սկառուութեան եւ խումբ մը պատանիներու միացեալ ասմունքը՝ Պարոյր Սեւակի «Մենք քիչ ենք» բանաստեղծութեան:

Օրուան բանախօսն էր ՀՅԴ Գանատայի Հայ Դատի գրասենեակի տնօրէն Սեւակ Պէլեան, որ պատշաճօրէն փոխանցեց օրուան պատգամը:

Խօսք առին օրուան հիւրերէն փոխ քաղաքապետ Մայք Սքատաֆորա եւ Համիլթոնի քաղաքապետական խորհուրդի անդամ հայազգի Թոմ Ճաքսըն: Թոմ Ճաքսըն Ճորճթաունի հայ որբերու շտաբի ղեկավարն է:

Այս ձեռնարկին առթիւ դադուլի անդամներու կողմէ յատուկ կազմուած մօտ 20 հոգիինոց երգչախումբին կողմէ երգուեցաւ «Տուն իմ հայրենի» երգը:

Արժ. Տէր Հրանդ Քհն. Մանուկեանի փակման խօսքով եւ «Պահպանիչ»-ով յուշատօնը աւարտեցաւ ժամը 4-ին:

Յակոբ Արգարեան

Հայոց Ցեղասպանութեան 110-րդ ամեակի ոգեկոչում Սեմք Գաթրինգի մէջ

Կազմակերպութեամբ Սեմք Գաթրինգի Հայ Դատի յանձնախումբին եւ մասնակցութեամբ Սեմք Գաթրինգի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ, Ուրբաթ, 25 Ապրիլ 2025-ին, Սեմք Գաթրինգի Հայ կեդրէն ներս տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 110-րդ ամեակի պաշտօնական ոգեկոչումը:

Միջոցառման ներկայ էին Դաշնակցային խորհրդարանի երեսփոխան Քրիս Պիթլը, Նահանգային խորհրդարանի երեսփոխան Ճէնի Սթիվընզի ներկայացուցիչը, Սեմք Գաթրինգի քաղաքապետ Մաթ Սիսքոյի ներկայացուցիչ եւ քաղաքապետական խորհուրդի անդամ Ռապլը Մըքֆիլսըն եւ քաղաքապետական խորհուրդի շարք մը անդամներ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հրանդ Քհն. Մանուկեան, Հոգաբարձութեան ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Հայ կեդրոնի յարկին տակ գործող բոլոր միութեանց եւ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Յայտագրի հանդիսավար Ալիս Այվազեանի բացման խօսքէն ետք, ՀՄԸՄ Սեմք Գաթրինգի մասնաճիւղի սկառուները, ընկերակցութեամբ դադուլի երիցագոյն անդամներէն Սեպուհ Թորքաճեանի, միասնաբար վառեցին յաւերժութեան ջահը: Ապա, յաջորդաբար խօսք առին քաղաքական ներկայացուցիչները, անհրաժեշտ նկատելով Հայոց Ցեղասպանութեան նշումն ու անոր ժխտումին դէմ տարուելիք հետեւողական աշխատանքներու շարունակութիւնը: Անոնք միանշանակ դրուատեցին գանատահայութեան քաղաքական ջանքերը, որոնք ի գործ կը դրուին ի խնդիր արդարութեան, արդար պահանջատիրութեան եւ ցեղասպանութեան ճանաչման: Իրենց խօսքերուն ընթացքին նաեւ ընթերցուեցան վարչապետ Քառնիի եւ դաշնակցային այլ կուսակցութեանց պաշտօնական ուղերձները:

Անկէ ետք բեմ բարձրացաւ օրուան բանախօսը՝ Հայ Դատի Օթթաուայի գրասենեակի վարիչ տնօրէն Սեւակ Պէլեանը, որ իր բանախօսութեան ընդմէջէն ներկաներուն փոխանցեց Հայ Դատի հետեւողական պայքարի պատգամն ու մեր հաւաքական կեցուածքը շարունակելու եւ անոր աւելի դարկ տալու անհրաժեշտութիւնը, մանաւանդ ի տես ցեղասպանութեան ժխտումին ու անոր շարունակութեան Արցախի մէջ: Եզրափակելով իր խօսքը, Պէլեան ընդգծեց, թէ համայն հայութիւնը այսօր պատրաստ է ներկայացնելու իր իրաւասու պահանջները, որոնց արդար նուաճումը կարիքը ունի միասնական եւ անհահանջ աշխատանքի:

Պէլեանի խօսքէն ետք տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր, որմէ ետք Արժ. Տ. Հրանդ Քհն. Մանուկեան իր սրտի խօսքով ու աղօթքով փակեց օրուան յայտագիրը:



Ձեր բոլոր ճամբորդական
Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

**ԼՍԻՊԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ
ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

***Նոր Յացէ՝**

PERMIS DE QUÉBEC

Voyages Haig Travel

4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

Tel: + 1 514-284-7676

Email info@haigtravel.ca

Հուրիմա

Ghadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

Crown Pastries
حلويات لتاج
Fine Middle Eastern Pastries

SCARBOROUGH
1279 Kennedy Rd. Ontario
(416) 615-7000

MISSISSAUGA
5083 Dixie Rd. Unit D3, Ontario
(905) 602-2018

SCARBOROUGH
2086 Lawrence Ave. E., Ontario
(416) 351-2015

CROWNPASTRIES.COM

OAKVILLE
407 Incoque Shore Rd. Ontario
(905) 338-2021

416.918.3615 CALL ME IT'S THAT SIMPLE
Annie Varbed@gmail.com | www.AnnieVarbedian.com

#1 RESIDENTIAL TOP PERFORMING PRODUCER

Sutton Buy Sell Invest
Sutton Group Admiral Real Inc., Brokerage
Independently Owned And Operated
Office: 416.739.7200 | Fax: 416.739.9367
1206 Centre St. Thornhill, ON. L4J 3m9

ARZ fine foods
The Essence of Mediterranean Gourmet Since 1989

Website: arzfinedfoods.com
Email: info@arzfinedfoods.com

Scarborough Location
1909 Lawrence Ave E,
Scarborough, ON M1R 2Y6
(416) 755-5084

Mississauga Location
720 Bristol Rd W,
Mississauga, ON L5R 4A5
(905) 502-9292

Haroot Sepan

T +1 (416) 900 8626
F +1 (416) 900 8659
C +1 (416) 939 1895

haroot@araratfoods.com
www.araratfoods.com

Ararat Trading (2002) Corp
5820 Kennedy Rd Mississauga,
ON L4Z 2C3 CANADA

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Gabriel Chahinian Broker
647-580-5818

Gary (Giro) Chahinian President, Broker of Record
416-258-8892

I.D.A.
Part of the *Recall* family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈՒՊՈՒՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164



ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ... ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ՀԱՆԴԵՐՁ, ԴՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՉՈՒԱԾ ԵՍ

«Հոգեւոր մարդիկ խիստ կ'ենթարկուին փորձութիւններու,
որոնց աղբիւրը սկզբնական մեղքն է»:

ՀԱՍՏԱՏՈՒՆ ՅՈՅՍԸ ԵՒ ԱՆՎՀԱՏՈՒԹԻՒՆԸ

4.- Մարդ եթէ նոյնիսկ հոգիին խորերը սուզուած ըլլայ եւ շնորհքով հաստատուած, տակաւին իր մէջ չարի մնացորդաց մը կ'ունենայ: Սակայն ան իր կողքին շատ մօտիկ օգնական մը կ'ունենայ, որ կը խնամէ ու կ'օգնէ իրեն: Այս իմաստով ալ, երբ մարդ դժուարութիւններու մէջ կ'ըլլայ եւ կիրքերու կատաղի ալիքները իր դէմ կը բարձրանան, պէտք չէ յուսահատի, որովհետեւ յուսահատութիւնը կը խթանէ մեղքը եւ առիթ կը գտնէ աւելիով տիրելու մարդուն վրայ: Սակայն, երբ մարդ Աստուծոյ հաստատուած միշտ կը յուսայ, ապա մեղքը կը տկարանայ, կը նուազի ու կը չորնայ:

Անդամալուծութիւնը, պակասաւորութիւնը, այլանդակութիւնը, ջերմութիւնն ու հիւանդութիւնները, բոլորն ալ մեղքի հետեւանք են, որովհետեւ մեղքը բոլոր չարիքներուն արմատն է : Եւ բոլոր ցանկութիւնները, որոնք հոգիի անկումին եւ չար մտածումներուն ծնունդ են՝ մեղքին կը վերագրուին: Հոսող ջրի աղբիւրը, նոյնիսկ եթէ ճահիճներով եւ խոնաւ գետիներով շրջապատուած է, երբ արեւին կիզող ջերմութիւնը անոր վրայ կեդրոնանայ, թէ՛ զինք եւ թէ՛ զինք շրջապատող ճահիճներն ու խոնաւ գետիները կատարելապէս կը չորցնէ ու կը ցամքեցնէ: Այդպէս է նաեւ Աստուծոյ ծառաներուն պարագան, որոնց մէջ կը յորդի եւ կ'առատանայ Աստուծոյ շնորհքը: Այս շնորհքը հոգիին մէջ կը չորցնէ ու կը ցամքեցնէ այն ցանկութիւնը, որ յարուցուած է չարին եւ կամ մարդկային բնութեան կողմէ: Որովհետեւ Աստուծոյ մարդիկը այժմ առաջին Ադամէն աւելի գերազանց են:

ՄԵԾՆ ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ
«ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՋՆԵՐ»
Հայացուց՝ Մակար Արք. Ազգարեան
(Շարունակելի 3)

ԱՂՕԹ ԽՆԴՐԱՆՔՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Քու դիմացդ ծունկի եկած, ամբողջ սրտով կ'աղաչենք եւ գթութիւնդ կը հայցենք, բարերար եւ բազումողորմ Աստուած: Ինչպէս քու ծառաներուդ խոստացար՝ ըսելով. «Ինչ որ հաւատքով խնդրէք Հօրմէն՝ Որդիին անունով, պիտի տրուի ձեզի», այս պահուն շնորհէ՛ եւ իրենց բարի կատարումին հասցուր քեզի հաւատացողներու խնդրանքները, որովհետեւ քեզի՛ ապաւինած ենք: Քու առատ ողորմութեամբդ միսիթարէ՛ մեզ այս կեանքին մէջ, եւ առաջնորդելով՝ երկինքի անպատմելի արքայութեանդ հասցուր, որպէսզի ամենասուրբ Երրորդութիւնդ փառաբանուի եւ պատուուի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ԲՈՒԺԻՉ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր կեանքին մէջ եղող բոլոր հակասութիւնները ինչպիսիք են, օրինակ, ըլլալ տան մէջ սակայն զգալ անտուն, զբաղած ըլլալով հանդերձ՝ ձանձրանալ, ժողովրդականութիւն վայելել, սակայն միեւնոյն զգալ ինքզինք, ըլլալ հաւատացեալ, բայց բազմաթիւ կասկածներ ունենալ, ասոնք կրնան սարսափեցնել, զայրացնել եւ նոյնիսկ յուսահատեցնել մեզ: Այս բոլորը կը մղեն մեզ ունենալու այն զգացումը, թէ մենք երբեք լիովին ներկայ չենք: Մեզի համար բացուող իրաքանջիւր դուռ մեզի կը ցուցնէ, քանիներու դռներու փակ ըլլալը:

Բայց ուրիշ պատասխան մըն ալ կայ: Այս նոյն հակասութիւնները կրնան մեզ աւելի խոր կարօտի մը հետ շփման մէջ դնել, ցանկութեան մը իրականացման համար, որ կը գտնուի միւս բոլոր ցանկութիւններուն յատակը, եւ որուն Աստուած միայն կրնայ յազեցում տալ: Այսպէս, ըմբռնուած հակասութիւնները կը ստեղծեն այն շփումը, որ կրնայ օգնել մեզի յառաջանալու դէպի Աստուած:

ՃԱՆԱԴԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՅՐ
ՀԵՆՐԻ Ճ. Մ. ՆՈՒԸՆ
Հայացուց՝ Մակար Արք. Ազգարեան

THE BIG ISSUES AND WHAT THE BIBLE SAYS ABOUT THEM

SOCIAL MEDIA

Social media can be seen as an incredible opportunity to connect with others and impact their lives. How we use this opportunity is very important, and so is the way we let it affect us. About two-thirds of young people say that social media has a negative influence on the way they feel about themselves, so we need to be on our guard. While Jesus may not have had a social media account, he did say a lot about how we should speak to other people, and this is true when we're using social media as when we're in face-to-face conversation.

When we look at our timelines, with other people's filtered and staged photos, it can be easy to compare ourselves to them and feel bad about ourselves.

-MAKE THE- EXPERIENCE BETTER

So how could you for other people? What would it look like for you to only post images that made people want to do good in the world rather than feel bad about themselves? Could you only write status updates and messages that brought life to those who read them? Or perhaps choose, each week, to raise awareness of something that matters to you and God? You have been given a tool – use it well.

KEY BIBLE VERSES:
COLOSSIANS 4: 5-6;
EPHESIANS 4:29-32;
HEBREWS 10:24





ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Չատկէն քառասուն օր ետք, Յինանց Զ. Եօթնեակին, Հինգշաբթի օրը կը տօնուի Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի վերացումը կամ համբարձումը Ձիթենեաց լեռնէն: Տասնօրեայ է այս տօնը, որուն կը յաջորդէ Հոգեգալուստը:



Հայ ժողովուրդի մէջ ՎԻՃԱԿԻ օր կ'ընտի ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ, որովհետեւ Յուդայի տեղ վիճակով ընկրուեցաւ Մափաթիան (Գործք Առաքելոց 1.26) եւ այդ օր է որ հայ մայրեր ու աղջիկներ ՎԻՃԱԿԻ խրախճանք կ'ընեն տուներու մէջ, մասնաւոր արարողութիւններով, քրիստոնէական ոգի մը դնելով վիճակահանութեան մէջ:

ՀՈԳԵԳԱԼՈՒՄՍ

Հոգեգալուստ կամ Պենտեկոստէ Հոգւոյն Սրբոյ իջման նուիրուած առաջին Կիրակին է Չատկի կամ Յինանց Կիրակիներէն յետոյ:

Պենտեկոստէ (յունարէն Բենդեգօսդի) կը նշանակէ Յիսներորդ, հրէական տօն մըն է ծագումով, Եգիպտոսի մէջ իրենց տօնած վերջին Պսեքի (Չատկի) յիշատակին, զոր կը տօնէին Պասեքի յիսներորդ օրը: Հրէից Պենտեկոստէն տօնն է նաեւ Հնոճ եւ Երախայրեաց, այսինքն գոհութեան տօն մը: Պենտեկոստէն հրէից համար, ըստ աւանդութեան, տարեդարձն է նաեւ աստուածային օրինադրութեան Սինա լեռան վրայ:



Հոգեգալուստ կը նշանակէ Սուրբ Հոգւոյն գալը կամ իջումը, որ տեղի ունեցաւ Պենտեկոստէի օրը, Վերնատան մէջ (Գործք Առաքելոց 2), եւ Քրիստոնէական Եկեղեցին պահելով իանդերձ Պենտեկոստէ անունը, նուիրագործեց այդ Կիրակին Հոգեգալուստեան Կիրակի անունով: Հոգեգալուստը եօթնօրեայ տօն մը եղաւ Շնորհալիի կարգադրութեամբ, եօթնեակն ալ «անլուծանելի» պահք հռչակելով:

Այս շաբաթապահքը կը կոչուի նաեւ Եղիական պահք, պարզապէս անոր համար, որ Հոգեգալուստին յաջորդող առաջին Կիրակին Ճաշու Ժամին կը կարդացուի Եղիա Մարգարէի պատմութիւնը (Դ. Թագաւորաց 1-5):

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ
ԲԱՐԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

THE BOOK OF 1 CHRONICLES

WRITTEN: LATER THAN 1 AND 2 KINGS (PROBABLY 350-300BC)

WHY READ IT?


This book is a cherry recap of Israel's history, up to the death of King David. It opens with a long list of names, but this is to give some context to the people's story. It's an encouragement to see God's faithfulness to people who keep going even when things go wrong.

WHAT YOU NEED TO KNOW:

1 and 2 Chronicles were originally one book, thought to have been written after the Jews had returned from exile in Babylon. This book is more interested in story than historical accuracy, intended as an encouragement to the Jewish people. It highlights the times when people did follow God rather than when they weren't faithful to him, and shows the lessons learned from history. The writer focuses on God's promises, people's achievements and the origin of worship and the Temple.

KEY CHARACTER:

Chapter 11 gives the names of David's most trusted soldiers – ‘The Three’ and another ‘Famous Thirty.’ These were his elite fighters who he kept close to him because he knew that they would lay down their lives for him. They showed strength, bravery and commitment, and were willing to give everything for what they believed in.



THE LETTERS 1 THESSALONIANS

WRITTEN: AROUND AD 50-51

WHAT YOU NEED TO KNOW:

This letter was written to the church in Thessalonica, in northern Greece. Some theologians think that this is Paul's earliest letter and therefore the oldest book in the New Testament. Lots of people became Christians when Paul visited Thessalonica, but many more people were unhappy about this, so they kicked Paul out of the city. This meant that there were lots of fresh but immature Christians left behind, who needed guidance. Paul wrote this letter in response to questions that the believers were asking about what will happen when Jesus returns, and what happens when we die. He also reminded them to live a holy life meanwhile.

WHY READ IT?

This letter contains discussion about some of life's bigger questions. It reminds us that even though we have questions, we can be sure about what Jesus has done, and we can live for Jesus until he comes again. It's a great read for anyone who has recently become a Christian, as that's the audience it was written for.

SPOTLIGHT:

The city of Thessalonica was one of a number of important places that made up the Roman province of Macedonia (northern Greece). It was the leading seaport of Macedonia and the second biggest city in Greece.





**ՆԻԿԻՌՅ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ
«ՀԱԻԱՏԱՄՔ Ի ՄԻ ԱՍՏՈՒԱԾ, Ի ՀԱՅՐՆ ԱՄԵՆԱԿԱԼ
ԵՒ Ի ՄԻ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, ԵՒ Ի ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ»:**

1.- Աստուած եւ աստուածաբանութիւն: Աստուածաբանութիւնը այն գիտութիւնն է, որ կը խօսի Աստուծոյ մասին, եւ կը քննէ հաւատքին վերաբերող բոլոր երեսները: Այդ գիտութեան հիմը Աստուածաշունչն է, առանց որուն՝ աստուածաբանութիւնը ռեւէ բան չի հաստատեր: Բայց աստուածաբանութեան մէջ մտածողութեան այն կերպը, որ կը գործածուի՝ իմաստասիրական (փիլիսոփայական) մտածողութեան կերպն է:

2.- Կրնանք ճանչնալ զԱստուած: Աստուած իր բնութեամբ անճանաչելի է, այսինքն՝ կարելի չէ ճանչնալ: Մենք զԱստուած ճանչնալու երկու հիմնական կերպեր ունինք.-
ա) Յայտնութիւնը, այսինքն՝ Աստուածաշունչը եւ բերանացի յայտնութիւնը: Մենք զԱստուած կը ճանչնանք միայն այնքան՝ որքան որ ինք ինքզինք յայտնած է մեզի անցեալին՝ նահապետներուն եւ մարգարէներուն միջոցաւ, եւ ներկայ ժամանակին՝ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:
բ) ԶԱստուած կը ճանչնանք իր գործերէն, այսինքն՝ ստեղծագործութենէն եւ իր նախախնամութենէն:

3.- Աստուած եւ գիտութիւն: Գիտութիւնը չ'զբաղիր Աստուծոյ հարցով, ոչ ալ աստուծային ճշմարտութիւններով: Անոր առարկան տիեզերքն է, աշխարհը եւ մարդը: Միւս կողմէ, աստուածաբանութիւնը գիտութիւն է որոշ իմաստով, որովհետեւ իր եզրակացութիւններուն համար Աստուածաշունչէն զատ (եւ Աստուածաշունչէն անկախ) կը հիմնուի մարդկային միտքի դատողութեան եւ ապացոյցներու վրայ: Օրինակ, անհաւատի մը խօսած ատեն կարելի չէ Աստուծոյ գոյութիւնը ապացուցանել Աստուածաշունչով: Պէտք է խօսիլ՝ միտքին դիմելով: Արդ, մարդկային միտքին համար Աստուծոյ գոյութեան ապացոյցներն են.-
ա) Աշխարհին գոյութիւնը: Ուեւ բան ինքնիրեն չի գոյանար. անհրաժեշտօրէն բացարձակ Գոյութիւն մը պէտք է ըլլայ պատճառը բոլոր տեսանելի եւ անտեսանելի գոյութեանց: Ամէն ինչ միակէ մը կը սկսի, եւ առաջին ու բացարձակ Միակը Աստուած է:
բ) Շարժումին գոյութիւնը: Նիւթը ինքնին անկեանք եւ անշարժ է, եթէ իրմէ դուրս շարժիչ մը չունենայ: Այդ շարժիչը ինք նիւթ է նիւթեղէն չի կրնար ըլլալ. պէտք է աննիւթ Գոյութիւն մը ըլլայ, որ Աստուած է:
գ) Տիեզերական կարգաւորութեան գոյութիւնը: Այս կարգաւորութիւնը պատահականութեան ծնունդը չի կրնար ըլլալ: Ինքնիրեն ձգուած բնութիւնը դէպի անկարգութիւն կ'երթայ: Կարգաւորութիւնը տիեզերքին ետին գործող Մեծ Միտքին մը կամ Բանականութեան մը արդիւնքը միայն կրնայ ըլլալ:
դ) Մարդուն մէջ անհունին հասնելու փափաքը, կատարելութեան ցանկութիւնը, անմահութեան ձգտումը, բարոյական հասկացողութեանց եւ խղճմտանքին գոյութիւնը կը հաստատեն Աստուծոյ գոյութիւնը:

4.- Մէկ Աստուածութիւն եւ Սուրբ Երրորդութիւն: Աստուած մէկ է: Ամբողջ Աստուածաշունչը կը խօսի այս միակութեան մասին, եւ անդադար կը շեշտէ զայն, զգուշացնելու համար բազմաթիւ աստուածներ պաշտելու մոլորութենէն, որ մարդիկը Աստուծմէ հեռացնելու սատանայական հնարքն է: Աստուած մէկ է: Հին Կտակարանին մէջ անիկա ինքզինք կը յայտնէ իբրեւ Ամենակալ Աստուածը, Ամենակարող Աստուածը, Յաւիտենական Աստուածը, «Ան՝ որ է» (Ել 3.14, 6.3): Նոր Կտակարանին մէջ Աստուած ինքզինքը կը յայտնէ իբրեւ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգին: «Երրորդութիւն» բառը չկայ Աստուածաշունչին մէջ, բայց անոր հասկացողութիւնը կամ վարդապետութիւնը կու գայ Աստուածաշունչէն, ՀՎ-ի մէջ քօղարկուած ձեւով, իսկ ՆԿ-ին մէջ՝ բացայայտօրէն (Մտ 28.19: Բ.Կր 13.13: Հմմտ Ա.Կր 12.4-6): Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին երեք անձեր են, բայց ո՛չ երեք Աստուածներ: Անոնք մէկ եւ նոյն Աստուածն են: Իրենց բնութեամբ եւ յատկութիւններով, իրենց կամքով ու գործով, իրենց կարողութեամբ եւ իշխանութեամբ նոյնն են անոնք, բայց իրենց ներքին կապերով եւ յարաբերութիւններով կը զանազանուին, առանց երբեք շփոթուելու իրարու հետ: Օրինակ.- Ինչպէս մադկային հոգի ըսելով երեք բաներ կը հասկնանք.- կամքը, որմէ ծնունդ կ'առնէ միտքը, եւ որմէ կը բղխի կարողութիւնը. եւ այս երեքը՝ կամք, միտք եւ կարողութիւն, երեք անշփոթելի բաներ ըլլալով հանդերձ՝ երեք հոգիներու մասին չենք խօսիր, այլ մէկ եւ միակ հոգիի մասին: Նոյնն է երեք անձնաւորութեանց պարագային, որոնք մէկ եւ միակ ճշմարիտ Աստուածն են:

5.- Հայրն Աստուած: Աստուած ամէն բանի սկիզբն է, սկիզբը սկիզբներուն, միակ սկիզբը ամէն բանի, ինքը ըլլալով միակ անսկիզբը: Այս ճշմարտութիւնը կը վերաբերի Սուրբ Երրորդութեան, բայց յատուկ կերպով զայն կը մասնատրենք Հայր Աստուծոյ համար: Որդին եւ Սուրբ Հոգին թէպէտ անսկիզբ են եւ անժամանակ, բայց իրենց պատճառը եւ սկիզբը ունին Հօր Աստուծոյ մէջ, այնպէս՝ ինչպէս ճառագայթն ու ջերմութիւնը արեւէն սկիզբ կ'առնեն բայց անոր հետ միաժամանակ կան (եւ ո՛չ թէ յետոյ), որովհետեւ արեւ չկայ առանց ճառագայթի եւ ջերմութեան:

6.- Աստուած Հայրը՝ աստուածութեան եւ ապագայ Եկեղեցւոյ Ընդանիքին յարաբերաբար: «Հայր» կոչումը Սուրբ Երրորդութեան առաջին անձնաւորութեան կու տանք, որովհետեւ Որդին ինք, մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, միշտ այդպէս կոչեց զայն: Այդ անունը մարդկային հայրութեան հասկացողութեան հետ նմանութիւն ունի բայց նոյնը չէ: Հայր մը իր որդիին հետ նոյն բնութիւնը ունի, բայց տարիքով ու փորձառութեամբ անկէ մեծ է, նկարագրով, կամքով ու գործով անկէ տարբեր է: Այդպէս չէ Աստուծոյ Որդիին եւ Հօրը պարագային: Որդին ո՛չ միայն Հօրը բնութիւնը ունի, այլ նաեւ նոյն կամքը, նոյն իշխանութիւնը, նոյն փառքը եւ պատիւը: Անիկա «Հօրը փառքին լոյսը եւ անոր էութեան ճշգրիտ պատկեր»ն է (Եբր 1.3): Բայց Որդի կը կոչուի՝ մեզի համար, մեզի սորվեցնելու համար՝ թէ ի՛նչպէս կրնանք ճշմարիտ եւ կատարեալ որդիներ ըլլալ Աստուծոյ:

Եւ արդարեւ Աստուած Հայր է նաեւ մեզի համար: Այս հայրութիւնը բնութենական չէ, այսինքն՝ մենք Հօրը բնութենէն ծնած չենք: Մեր պարագային Աստուծոյ հայրութիւնը հոգեւոր է. մենք հաւատքի ճամբով Աստուծոյ որդեգիրներ ենք: Որովհետեւ Աստուծոյ յաւիտենական ծրագիրն է՝ մարդոցմէ իրեն ժողովուրդ մը կազմել, եւ այդ ժողովուրդը իր սեփական «ընտանիքը» դարձնել: Այդ ժողովուրդը եւ ընտանիքը Աստուծոյ Եկեղեցին է, որ մենք բոլորս ենք (Եփ 2.19): Ահա թէ ինչու՝ Հաւատամքին մէջ երբ կ'ըսենք՝ «Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ» (Կը հաւատանք մէկ Աստուծոյ՝ ամենակալ Հօր), անով նաեւ կ'արտայայտենք մեր որդիութիւնը Աստուծոյ, եւ մեր կոչումը՝ իբրեւ Աստուծոյ Ընտանիքին անդամները:

ՄԵԿՆՈՒԹԻԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱԻԱՍԱՄՔԻՆ
Զարեհ Արք. Ազնաւերեան
(Շարունակելի 2)



ՑԱՆ

Սերմանողն է: - Յաղթահասակ կը կանգնի
Մայրամուտին շողերուն մէջ ոսկեթոյր:
Ուրքին առջեւ անդաստաններն հայրենի
Կը տարածեն մերկութիւննին անպարոյր:

Լի է ամբողջ ցորեններով աստղահատ
Խորունկ գոգնոցն: Հերկերն հերուան՝ ծարաւի՝
Կը սպասեն իր լայնշի բուռին, եւ բուռն այդ
Արտերուն վրայ՝ զերթ արշալոյս՝ կը բացուի:

Մշակ, ցանէ.- յանուն տանըդ սեղանին
Թւելիդ շարժումն անպարագիճ թող ըլլայ.
Վաղը նետած ցորեններդ այդ կը թափին
Օրհնութեան պէս թոռնիկներուդ գլխուն վրայ:

Մշակ, ցանէ .- յանուն նօթի թըշուառին
Թող գոգնոցէդ կէս չելլէ ափըդ բընաւ.
Աղքատ մ'այսօր ճըրագին մէջ տաճարին
Վաղուան հունձքիդ համար վերջին ձէթը դրաւ:

Մշակ, ցանէ.- յանուն Տիրոջ նըշխարին
Թող մատերէդ յորդին սերմեր լուսեղէն.
Վաղը ամէն մէկ հասկի մէջ կաթնային
Պիտ՝ հասուննայ մաս մ'Յիսուսի մարմինէն:

Ցանէ, ցանէ.- նոյնիսկ հեռու սահմանէն,
Աստղերու պէս, ալիքներու պէս ցանէ՝:
Ծիտերն ինչ փոյթ թէ հատիկներդ կ'աւարեն.-
Տեղը Աստուած պիտի մարգրիտ սերմանէ:

Լեցնիւր ալօսն, յորդէ հերկերը բերրի,
Հողին ծոցէն ոսկի լոյսեր թող հոսին.
Օրը ահա կ'իրիկնանայ.- կ'երկարի
Շուքը թւելի հորիզոններն աստղային:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

PRAYER

Gracious God, you have established the nine orders of angels to reflect your glory and majesty and to keep watch over your chosen people. May Michael, the prince of the heavenly Host, Gabriel, the celestial messenger, and Raphael, the healer of souls and bodies, be the ever-watchful guardians of your Church and your messengers in time of need. We ask this through Christ, Lord of the Angels. Amen.

Catholics Aram I congratulates newly elected Pope Leo XIV

ANTEILIAS — His Holiness Catholicos Aram I, on behalf of the Armenian Church, Holy See of Cilicia, on May 10 extended cordial congratulations to His Holiness Pope Leo XIV on the occasion of his election as the new Supreme Pontiff of the Catholic Church.

In his official letter, Catholicos Aram I conveyed heartfelt commendations and expressed hope that the election of Pope Leo XIV would mark the beginning of a transformative new chapter in the life of the Catholic Church.

Addressing the critical challenges facing today’s world, His Holiness underscored the need for a renewed commitment to the Church’s mission and a reimagining of its evangelization efforts. He affirmed that Pope Leo XIV, with his deep pastoral experience and longstanding service, is uniquely positioned to lead the Church with wisdom and vision during this pivotal time.

Catholicos Aram I also reflected on the enduring relationship between the Holy See of Cilicia and the Vatican—one that dates back to the Cilician era and has been actively cultivated in recent decades through ongoing ecumenical cooperation and theological dialogue.

Concluding his message, the Catholicos offered prayers for God’s guidance and strength to support Pope Leo XIV as he undertakes the sacred and demanding responsibilities of his

new ministry.

The next day, with the blessing of Catholicos Aram I, an ordination ceremony was held on Sunday, May 11 during the Divine Liturgy at St. Gregory the Illuminator Cathedral. 13 seminarians were ordained as acolytes, and 6 received the rank of subdeacon.

Archbishop Shahan Sarkissian officiated the ceremony, with Very Rev. Fr. Azad Filikian serving as the sponsor priest and Very Rev. Fr. Oshin Tchalertanian as the celebrant of the Divine Liturgy.

Fr. Azad led the seminarians to the chancel, where Archbishop Shahan conferred the four minor ranks of the Armenian Church—reader, porter, torchbearer, and exorcist—upon the acolytes. He then bestowed the subdeaconry, placing the sacred vestment on the left hand of each newly ordained subdeacon.

In his sermon, Archbishop Shahan reflected on the importance of building one’s faith on the solid foundation of God, the “Rock.” Quoting John 6:38, he emphasized Christ’s example of fulfilling God’s will and encouraged the newly ordained to do the same. He also called on faithful families to consider the Seminary as a path for their children to serve God and the Armenian Church.

Following the ceremony, the newly ordained participated in the Divine Liturgy by serving at the altar.

Yerevan yet to act on EU Accession Bill passed in March

YEREVAN — Despite the Armenian parliament’s approval in March of a bill declaring the start of the country’s accession process to the European Union, the government has not taken any further action toward that goal, a senior official confirmed on May 9.

The symbolic one-sentence law, passed by the National Assembly dominated by Prime Minister Nikol Pashinyan’s Civil Contract party, states the intention to begin the process of joining the EU. It was adopted in the face of strong objections from Russia, Armenia’s traditional ally.

Officials in Yerevan have insisted the bill does not constitute a formal application for EU membership. However, they have yet to specify what concrete measures, if any, will follow its passage.

The legislation originated from several pro-Western civic groups aligned with Pashinyan. Last year, they gathered 60,000 signatures in support of holding a referendum on EU mem-

bership. In January, Pashinyan stated that such a referendum should only take place once Armenia and the EU develop a formal roadmap for accession.

So far, no EU member state has publicly backed Armenia’s potential membership. The European Commission has also remained noncommittal. EU Enlargement Commissioner Marta Kos remarked last week, “We haven’t received the [membership] application yet, but then we will see.”

Moscow has reacted sharply to Yerevan’s move. Russia’s Security Council Secretary Sergei Shoigu warned in March that Armenia’s pursuit of EU membership could trigger its exit from the Eurasian Economic Union (EEU), a Russia-led trade bloc that grants Armenia tariff-free access to the Russian market. He threatened retaliatory measures, including high tariffs on Armenian exports and the mass expulsion of Armenian migrant workers, which he claimed could slash Armenia’s GDP by a third.

Opposition lawmakers condemn Pashinyan’s threats, demand legal action

YEREVAN — Parliament deputies from the main opposition Hayastan alliance demanded on May 8 that Armenian law-enforcement authorities take action against Prime Minister Nikol Pashinyan over his latest threats to imprison them.

Pashinyan lost his temper and pledged to “go after” the opposition lawmakers the previous day after one of them accused him of turning a blind eye to media allegations of corruption among members of his entourage.

“You must be the first to go [to prison] and you will go,” he told another lawmaker during the Armenian government’s question-and-answer session in the National Assembly.

“Sit down, you moron,” he screamed in an ensuing shouting match with furious Hayastan lawmakers.

The latter condemned Pashinyan’s threats as illegal and challenged Prosecutor-General Anna Vardapetyan to act on them when she presented an annual report to the parliament the following day. Vardapetyan, who previously worked as a legal aide to Pashinyan, responded by repeatedly saying that she does not make “political statements.”

Hayastan’s Artsvik Minasyan denounced her stance and insisted that prosecutors must

give a “legal evaluation” of Pashinyan’s statements which he said amounted to a propaganda of “violence and intolerance.”

“You are now not an assistant to the prime minister but the prosecutor-general,” another lawmaker, Aghvan Vartanyan, told Vardapetyan. “I would advise you to forget about your previous position because the Criminal Code has articles about [officials’] full or partial failure to perform their duties.”

Anna Grigoryan, the lawmaker whose question incensed Pashinyan, also said that he must be accountable for his threats and insults. She did not rule out the possibility of filing a formal complaint with law-enforcement authorities.

“If we were a normal country, he would have to apologize ... But we understand what country we live in. If the National Assembly speaker can spit [at an anti-government heckler] then [Pashinyan] can easily use the vocabulary that I don’t even want to repeat,” Grigoryan told reporters.

Meanwhile, parliament speaker Alen Simonyan said it is the opposition lawmakers who must apologize to Pashinyan. He claimed that the incident was the result of their “insolent” behaviour.

(RFE/RL)

Civil Contract accused of undermining press freedom ahead of elections

YEREVAN—In the shadow of looming elections, Armenia’s Ministry of Justice has quietly unveiled a bill that would compel online media to delete content labelled as slanderous by the authorities. The proposal, still in draft form, hasn’t yet reached parliament — but its message is already loud and clear.

Two days before the bill was circulated, Arayik Harutiunyan, Prime Minister Nikol Pashinyan’s chief of staff, took to social media with a warning. Media outlets, he said, must “self-regulate” or prepare for state intervention — intervention he admitted would be seen as a “restriction on freedom of speech.”

The amendments target both the Civil Code and existing media law. The justification — protection of citizens’ “private and family life, honour and reputation” — leans on the language of dignity, but the timing and context suggest a different motive. With parliamentary elections less than a year away, the government appears to be laying the groundwork for a more sanitized public sphere, one where criticism of those in power is just another form of defamation.

Journalists who don’t toe the line see the writing on the wall. Aram Abrahamyan, editor of the long-running independent daily Aravot, dismisses the bill’s stated goals. “They treat every negative evaluation as an insult,” he said. “That’s the

problem.”

He points to how even a mundane observation — say, a lawmaker losing their temper — can be weaponized under vague standards. “The boundaries of insult are blurry. Any criticism might be labelled defamatory, and suddenly you’re being told to delete an article,” he added.

The law would even apply to user comments, dragging readers into the dragnet. Courts in Armenia already have the power to impose fines for defamation and demand retractions. What they cannot do — at least not yet — is order entire articles removed from the internet. This legislation would change that.

Grisha Balasanyan of Hetq, an investigative outlet, points to the larger political stakes. “We don’t have trustworthy courts,” he said. “There’s no reason to believe they won’t make politically motivated decisions.”

For him, the connection to the 2026 elections is obvious. The ruling party wants to curtail media scrutiny while it still can.

Harutiunyan’s May 2nd post, issued on the eve of World Press Freedom Day, did little to dispel that view. Without naming names, he accused the media of provoking hatred under the guise of free speech, and suggested that if they failed to reform, the public would demand state crackdowns. The idea that “the people” might ask for censorship is a familiar

deflection — power speaking in the name of an imagined, aggrieved majority.

For Armine Ohanyan, founder of the opposition-leaning Hraparak, the signal is unambiguous. “This is about bullying outlets that challenge the government or report on its corruption,” she said. “Freedom of speech is one of the few things we’ve actually won in this country. We’re not going to let people like Arayik Harutiunyan crush it.”

Abrahamyan agrees. Having steered Aravot through three decades and multiple regimes, he says Pashinyan’s government is proving more intolerant of dissent than its predecessors. The irony is that Pashinyan himself was once a journalist and editor, regularly accused by the old elite of spreading misinformation and inciting unrest. He came to power in 2018 claiming to be a champion of press freedom. That promise has withered.

In 2021, his administration tripled fines for slander and criminalized “serious insults” directed at officials — only to decriminalize defamation a year later under international pressure. Still, the overall trajectory is hard to miss: a shrinking space for criticism, a growing appetite for control, and a ruling class increasingly unable to distinguish between accountability and attack.

(Oragark)

Artsakh authorities against Minsk Group dissolution

YEREVAN — Artsakh President Samvel Shahramnyan said that the Artsakh authorities are against the dissolution of the OSCE Minsk Group, a condition pushed by President Ilham Aliyev of Azerbaijan and one that Armenia’s authorities are inclined to pursue.

Prime Minister Nikol Pashinyan last week proposed

to Azerbaijan that he will back the dissolution of the Minsk Group if Baku agrees to sign the peace accord simultaneously.

During a briefing with reporters on April 18 in Yerevan, President Shahramanyan said that the OSCE Minsk Group is “the only international platform that was created specifically to resolve the [Karabagh] conflict.

These decisions to close the ‘Artsakh page,’ to dissolve the Minsk Group, are announced by the authorities of Armenia. And I expect also the reaction of the citizens of Armenia.”

Foreign Minister Ararat Mirzoyan angrily declared on April 16 that Yerevan will not

A Mari Usque Ad Mare

GOVERNMENT OF CANADA INVESTING \$395-MILLION IN WATER AND WASTEWATER INFRASTRUCTURE

In a recent press declaration made by Nathaniel Erskine-Smith, Minister of Housing, Infrastructure and Communities, a new investment of \$369.5-million was announced for the construction and strengthening of the water and wastewater infrastructure across Canada. This federal investment will be funded through the Canada Housing Infrastructure Fund (CHIF) and will be a key investment to ensure that the essential infrastructure is built to help promote the construction of new housing supply in the country. This investment will see to the construction of over 110,000 housing units, that will be direct result of building strong essential infrastructure, and will also help get homes built faster everywhere. These projects that are going to improve infrastructure across different municipalities and Indigenous communities across Canada, will provide the foundation for the future of housing growth for all Canadians. Projects that are going to be a part of the crucial infrastructure improvements include; improving and expanding the access to potable, safe, and reliable drinking water, establishing new water supplies, increasing wastewater capacity in areas, construction of sustainable stormwater management and finding new solid waste management solutions.

“These strong partnerships and investments in critical housing enabling infrastructure will go a long way to get more homes built, faster,” said Minister Erskine-Smith.

FEDERAL FUNDING ANNOUNCED FOR NEW CONVENTION CENTRE IN WHITEHORSE

In a recent press declaration made by Dr. Brendan Hanley, MP for the Yukon, on behalf of Anita Anand, Minister of Innovation, Science and Industry, who oversees the Regional Development Agencies, including CanNor, a new investment was announced that will be supporting the construction of the Yukon Gathering Place, a new convention centre in Whitehorse. The investment will consist of \$56.25-million that will be allocated by Federal Government and Yukon Premier Ranj Pillai also stated the Territories contribution is part of that sum. This new Centre will be build alongside the Kwanlin Dün Cultural Centre, that is located on the waterfront of Whitehorse, in the traditional territory of the Kwanlin Dün First Nation

“The Yukon Gathering Place will be a hub for bringing people together, fostering collaboration, and celebrating the culture and heritage of the Kwanlin Dün First Nation. This investment reflects our commitment to supporting Indigenous leadership in economic development and strengthening opportunities for communities across the North,” said Gary Anandasangaree, Minister of Crown-Indigenous Relations and Northern Affairs.

MP Dr. Hanley said: “Building a new convention centre in Whitehorse is a strategic investment in our territory’s future. It will create new opportunities for economic growth and job creation and position Whitehorse as a premier destination for conferences, events, and tourism.”

“This is a historic moment for Yukoners and Yukon businesses. The new convention centre will drive economic growth, create jobs, and position Whitehorse as a top destination for conferences and tourism. This project reflects years of hard work, advocacy, and partnership, and it strengthens opportunities for all Yukon communities. This isn’t just about building a convention centre – it’s about creating lasting opportunities and shaping a strong future for all Yukoners,” said Premier of the Yukon Ranj Pillai.

FEDERAL GOVERNMENT WANTS TO EXTEND AGRISTABILITY ENROLMENT DEADLINE

According to a recent press declaration made in Saskatchewan by the provincial Agriculture Minister Daryl Harrison, along with federal, provincial, and territorial governments, the deadline for the currently existing 2025 enrolment program for AgriStability is set to receive an extension. This proposed extension for the deadline will be for the AgriStability Program which is the current margin-based program was set in place to help support producers, with the program responding to producers when their whole farm profitability is impacted, included but not limited to rising costs and declining market prices. In recent months tariffs have also posed a potential threat to producers and their potential impact to the prices they would received for sold agricultural goods. The government encourages farmers that are expecting losses for these and many similar reasons to apply for the program to receive these payments.

